

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/7

6 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ 28.08.2015 թ-ի գանգատը ՀՀ ֆինանսների նախարարության ԱՀՀԱՄ մաքսատան կողմից կազմված 10.04.2015 թ-ի թիվ 42 ակտի դեմ:

«Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) 19.12.2014թ. թիվ 737 հաշիվ-ապրանքագրով ՀՀ ֆինանսների նախարարությունից ձեռք է բերել 3.305.104 հատ ներմուծվող ծխախոտի ակցիզային դրոշմանիշեր, որոնք 20.12.2014թ.-ին արտահանվել են Ուկրաինայի Հանրապետություն: Արտադրության ընթացքում թվով 26.018 հատ վնասված ակցիզային դրոշմանիշեր 17.03.2015թ.-ին վերաներմուծվել են ՀՀ տարածք: ՀՀ կառավարության 26.12.1999թ. թիվ 662-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգին (այսուհետ Կարգ) համապատասխան Ընկերությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարության ԱՀՀԱՄ մաքսատուն՝ վնասված ակցիզային դրոշմանիշերը վերադարձնելու և ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարները հետ ստանալու նպատակով: Այդ կապակցությամբ ԱՀՀԱՄ մաքսատան կողմից 10.04.2015թ. կազմվել է թիվ 42 ակտը, որի համաձայն վնասված ակցիզային դրոշմանիշերից չի ընդունվել 89 հատը, իսկ 25.929 հատն ընդունվել է Կարգի 32-րդ կետի պահանջներին համապատասխան: Բացի այդ, Ընկերությանը մերժվել է վնասված ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարի հետ վերադարձը և առաջադրվել է նաև վճարելու վնասված ակցիզային դրոշմանիշերի քանակին համապատասխան ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված ակցիզային հարկի գումարը:

Ըստ Կարգի 27-րդ կետի վնասված դրոշմանիշերի հետընդունման ժամանակ վերադարձվում են ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարները, եթե «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետներում ապրանքները կամ ակցիզային դրոշմանիշերը ներմուծվել են ՀՀ, և չեն խախտվել կարգի 29-րդ և 30-րդ կետերի պահանջները:

Ավելին, Կարգի 28-րդ և 31-րդ կետերով սահմանված են նաև այն դեպքերը, երբ նախատեսվում է չներմուծված ակցիզային դրոշմանիշերի թվին համապատասխան ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված ակցիզային հարկի գանձում: Դրանք են.

- «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետներում դրոշմանիշերը ՀՀ չներմուծելը կամ մասնակիորեն ներմուծելը,

- չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը չվերադարձնելը մաքսային մարմիններին:

Նախևառաջ նշենք, որ Ընկերությունը ներմուծվող ծխախոտի ակցիզային դրոշմանիշերը ձեռք է բերել 19.12.2014թ.-ի թիվ 737 հաշիվ-ապրանքագրով, ինչը

նշանակում է, որ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված 90-օրյա ժամկետը լրանում է 2015 թվականի մարտի 19-ին:

Համաձայն «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ապրանքների ՀՀ տարածք ներմուծելը նշանակում է ապրանքների ներսերումը Հայաստանի Հանրապետության տարածք պետական սահմանը փաստացի հատելու միջոցով: Վնասված ակցիզային դրոշմանիշերը ՀՀ տարածք են ներմուծվել 2015 թ-ի մարտի 17-ին՝ N2015/05100033/9189 փոխադրման ամփոփագրի և N0002726 բեռնագրի համաձայն:

Վերը նշվածից ակնհայտ է, որ Ընկերությունը վնասված ակցիզային դրոշմանիշերը ՀՀ տարածք է ներմուծել և վերադարձրել մաքսային մարմիններին «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված 90-օրյա ժամկետում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, ընկերությունը խնդրում է ՀՀ ֆինանսների նախարարության ԱՀՀԱՄ մաքսատան 10.04.2015թ. թիվ 42 ակտն անվավեր ճանաչել և թույլատրել 25.929 հատ վնասված ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված ու այդ դրոշմանիշերի քանակին համապատասխան ապրանքների ներմուծման համար գանձված ակցիզային հարկի գումարները վերադարձնել Ընկերությանը կամ հաշվանցել ակցիզային հարկի հետագա հարկային պարտավորությունների մարմանը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ն 19.12.2014 թ-ի թիվ 737 հաշիվ-ապրանքագրով ՀՀ ֆինանսների նախարարությունից ձեռք է բերել 3.305.104 հատ ներմուծվող ծխախոտի համար ակցիզային դրոշմանիշեր, որոնք 20.12.2014 թ-ին արտահանվել են Ուկրաինայի Հանրապետություն: Արտադրության ընթացքում թվով 26.018 հատ վնասված ակցիզային դրոշմանիշեր 17.03.2015 թ-ին վերաներմուծվել են ՀՀ տարածք:

ՀՀ կառավարության 26.12.1999թ. թիվ 662-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան Ընկերությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարության ԱՀՀԱՄ մաքսատուն՝ վնասված ակցիզային դրոշմանիշերը վերադարձնելու և ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարները հետ ստանալու նպատակով: ՀՀ ՖՆ ԱՀՀԱՄ մաքսատան կողմից 10.04.2015 թ-ին կազմված թիվ 42 ակտի համաձայն վնասված ակցիզային դրոշմանիշերից չի ընդունվել 89 հատը, իսկ 25.929 հատն ընդունվել է Կարգի 32-րդ կետի պահանջներին համապատասխան: Բացի այդ, Ընկերությանը մերժվել է վնասված ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարի հետ վերադարձը և առաջադրվել է նաև վճարել վնասված ակցիզային դրոշմանիշերի քանակին համապատասխան ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված ակցիզային հարկի գումարը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ կառավարության 26.10.1999 թ-ի թիվ 662 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման

կարգ»-ի 27-րդ կետի համաձայն. «Չօգտագործված կամ վնասված դրոշմանիշերը ենթակա են վերադարձման մաքսային մարմիններ: Ընդ որում, դրանց հետընդունման ժամանակ վերադարձվում են ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարները, եթե «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետներում ապրանքները կամ ակցիզային դրոշմանիշերը ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն, և չեն խախտվել սույն կարգի 29-րդ և 30-րդ կետերի պահանջները»:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն. «Ակցիզային դրոշմանիշերը ներմուծողին տրամադրվում են 90-օրյա ժամկետով: Վերադաս մաքսային մարմինը մինչև 90-օրյա ժամկետի ավարտն օտարերկրյա պայմանադիր կողմի հետ կնքված պայմանագրի չկատարման կամ մասնակի կատարման դեպքում ներմուծողի դիմումի հիման վրա երկարաձգում է ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետը՝ դիմումում նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 90 օր»:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

ապրանքների ներմուծում Հայաստանի Հանրապետություն՝ Միության անդամ պետությունների տարածքից կամ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքից ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսրբումը Հայաստանի Հանրապետության տարածք՝ պետական սահմանը փաստացի հատելու միջոցով.»:

Քննարկվող դեպքում «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ն 19.12.2014 թ-ի թիվ 737 հաշիվ-ապրանքագրով ՀՀ ֆինանսների նախարարությունից ձեռք է բերել 3.305.104 հատ ներմուծվող ծխախոտի համար ակցիզային դրոշմանիշեր, հետևապես «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված 90-օրյա ժամկետը լրանում է 19.03.2015 թ-ին: Այնուհետև, արտադրության ընթացքում վնասված թվով 26.018 հատ ակցիզային դրոշմանիշերն ընկերության կողմից 17.03.2015 թ-ին ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն, հիմք՝ 17.03.2015 թ-ի N 2015/05100033/9189 փոխադրման ամփոփագիրը և N 0002726 բեռնագիրը:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ քննարկվող դեպքում վնասված դրոշմանիշերն ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ակցիզային դրոշմանիշերի տրամադրման ժամկետում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ 28.08.2015 թ-ի գանգառը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ